

Ծագրի դասիչը
Միջոցառման դասիչը

1144
11001

Ծրագրի անվանումը
«Մասնագիտական ուսուցման և որակավորման
բարձրացման կազմակերպում»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ
(ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո»
պետական ոչ առևտրային կազմակերպություն)

2020-2022

ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ

ԵՎ 2020

ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**2020 թվականի ՀՀ պետական բյուջեի 1144 ծրագրի 11001 միջոցառման դասիչով
«Մասնագիտական ուսուցման և որակավորման բարձրացման կազմակերպում»
ֆինանսավորվող ծրագրով
ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո»
պետական ոչ առևտրային կազմակերպության
2020թ. պետական պատվերի հայտի**

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) ստեղծվել է ՀՀ կառավարության 22 հունիսի 2004թ. թիվ 1127-Ն որոշման համաձայն (ՀՀ կառավարության 23 հունիսի 2005թ. թիվ 867-Ն և 11 հունիսի 2009թ. թիվ 638-Ն որոշումներով փոփոխված և լրացված)՝ «2001թ. հունիսի 11-ի ՀՀ կառավարության և ԱՄՆ-ի կառավարության միջև թմրամիջոցների հսկողության և իրավապահ ոլորտում համագործակցության մասին» միջկառավարական համաձայնագրի շրջանակներում: Կազմակերպության գործունեության առարկան է հանդիսանում փորձագիտության բնագավառում գիտահետազոտական, գիտաուսումնական, գիտամեթոդական, գիտափորձնական-վերլուծական աշխատանքների կատարումը, որն իրականացվում է համաձայն կանոնադրությամբ ամրագրված հետևյալ հիմնական գործառույթների.

➤ **Գիտական աշխատանք՝**

- փորձաքննությունների իրականացման ոլորտում ժամանակակից գիտափորձնական մեթոդների մշակումներ, փորձարկումներ և ներդրում,
- դատական փորձագիտական հետազոտությունների մեթոդական միասնականությունն ապահովելու նպատակով հետազոտությունների գործող մեթոդիկաների համակարգում, նորերի մշակում, դրանց փորձարկում և գործածության համար երաշխավորում,
- հանցավորություն ծնող պատճառների ու պայմանների ուսումնասիրում, հանցագործությունների կանխարգելմանն ուղղված կոնկրետ միջոցառումների գիտական մշակում և իրավասու մարմինների համար վերջիններիս ներդրման հետ կապված համապատասխան առաջարկությունների նախապատրաստում,

- պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից ներկայացվող փաստաթղթերի քրեաբանական հետազոտությունների կատարում,

- զանգվածային լրատվամիջոցների կողմից նախապատրաստվող (նախապատրաստված) հաղորդումների, հրապարակումների քրեաբանական հետազոտությունների կատարում,

- քրեաբանական հետազոտությունների իրականացման համար անհրաժեշտ վիճակագրական, տնտեսագիտական, հոգեբանական, քաղաքագիտական, սոցիոլոգիական և հասարակական այլ գիտությունների բնագավառներում հարցումների, մշակումների, վերլուծությունների կազմակերպում:

➤ **Իրավասու և իրավաստեղծ մարմինների կողմից նշանակված դատական և քրեաբանական փորձաքնությունների կազմակերպում և իրականացում:**

➤ **Լրացուցիչ կրթական ծրագրերի իրականացում՝**

- փորձաքնությունների համար ելակետային տվյալներ ձեռք բերելու պարտականություններ և փորձաքնություններ նշանակելու լիազորություն ունեցող իրավասու մարմինների աշխատողների ուսուցում և վերապատրաստում,

- փորձագիտության բնագավառի մասնագետների վերապատրաստում և կատարելազորում, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով նրանց որակավորման հավաստում:

Կարևոր է նշել, որ 1144 ծրագրի 11001 միջոցառման դասիչով նախատեսված «Մասնագիտական ուսուցում և որակավորման բարձրացման կազմակերպում» ֆինանսավորվող ծրագիրը նպատակաուղղված է միայն Լրացուցիչ կրթական ծրագրերի իրականացմանը՝ փորձաքնությունների համար ելակետային տվյալներ ձեռք բերելու պարտականություններ և փորձաքնություններ նշանակելու լիազորություն ունեցող իրավասու մարմինների աշխատողների ուսուցման և վերապատրաստման գործառույթի ապահովմանը:

2020թ. համար հայտի շրջանակներում 1144 ծրագրի 11001 միջոցառման դասիչով նախատեսված «Մասնագիտական ուսուցում և որակավորման բարձրացման կազմակերպում» ծրագրով ներկայացված հայտի վերաբերյալ անհրաժեշտ է նշել հետևյալը.

Մասնագիտական ուսուցում և որակավորման բարձրացման կազմակերպում /1144 ծրագիր 11001 միջոցառման դասիչ/ ծրագրի շրջանակներում 2020 թվականի համար

նախատեսվել է 21652.4 հազ. դրամի չափով ֆինանսավորում: Հարկ է նշել, որ Լրացուցիչ կրթության ուսուցման գծով պետական պատվեր ծախսային ծրագրի շրջանակներում 2005-2019 թվականների ընթացքում ՀՀ գլխավոր դատախազության և ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» պետական ոչ առևտրային կազմակերպության միջև կնքված «Պետության կարիքների համար ծառայությունների մատուցման պետական գնման» ամենամյա պետական պայմանագրերի համաձայն իրականացվել են փորձաքննությունների համար ելակետային տվյալներ ձեռք բերելու պարտականություններ և փորձաքննություններ նշանակելու լիազորություն ունեցող իրավասու մարմինների աշխատողների (նախաքննության, հետաքննության և այլ մարմինների աշխատակիցների) կատարելագործման և վերապատրաստման ուսուցողական դասընթացներ (համաձայն ՀՀ կառավարության 22 հուլիսի 2004թ.-ի N 1127 որոշման 3-րդ կետի գ) ենթակետի): Պետք է նաև նշել, որ 2019 թվականին օրենքի 1144 ծրագրի 11001 միջոցառման դասիչով նախատեսված «Մասնագիտական ուսուցում և որակավորման բարձրացման կազմակերպում» միջոցառումը 2019 թվականի համար սահմանված կարգով ձեռք է բերվել ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներով՝ գնանշման հարցման էլեկտրոնային գնման ձևով: Կարևոր է փաստել, որ իրականացված էլեկտրոնային գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել միայն ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, քանի որ ինչպես հայտնի է՝ ՀՀ Կառավարության 2004 թվականի հուլիսի 22-ի «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Փորձաքննությունների ազգային բյուրո» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու և նրա կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 1127-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) ստեղծված ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ը, որպես հանրապետությունում գործող պետական խոշորագույն դատափորձագիտական կազմակերպություն, նորմատիվ իրավական ակտով հաստատված կանոնադրության համաձայն, իրականացնում է նաև փորձաքննություններ նշանակելու և ելակետային տվյալների ձեռքբերման իրավասություն ունեցող աշխատակիցների Մասնագիտական վերապատրաստման որակավորման բարձրացման դասընթացներ՝ ներառելով հանրապետությունում գործող դատափորձագիտական բոլոր ուղղությունները: Տվյալ գործառույթը, որպես հատուկ իրավունք ամրագրված է Որոշման 3-րդ կետի «գ)» ենթակետով և Որոշմամբ հաստատված Կազմակերպության Կանոնադրության 17-րդ կետի «գ)» ենթակետով: Այս համատեքստում հարկ է նշել, որ փորձաքննություններ

նշանակելու և ելակետային տվյալների ձեռքբերման իրավասություն ունեցող աշխատակիցների մասնագիտական վերապատրաստման որակավորման բարձրացման դասընթացները փորձագիտական բնագավառում Կազմակերպության Կանոնադրության 17-րդ կետի «գ» ենթակետի համաձայն՝ որպես նորմատիվ իրավական ակտով որոշակի իրավասու մարմին՝ Կազմակերպությանը տրամադրած իրավասություններից բխող իրավունք, իրականացման են ենթակա բացառապես Կազմակերպության կողմից, ինչի մասին են վկայում նաև 2019 թվականին իրականացված գնանշման հարցման էլեկտրոնային գնման ընթացակարգին Հայաստանի Հանրապետությունում այլ կազմակերպության մասնակցության բացակայությունը:

Այս առումով հարկ է նշել, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված է՝ «1. Գնումը կարող է կատարվել մեկ անձից, եթե՝ 1) գնման ենթակա ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից, որը պայմանավորված է նրա հեղինակային և հարակից իրավունքներով, հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայությամբ. ... »:

Վերոգրյալից ելնելով Մասնագիտական ուսուցում և որակավորման բարձրացման կազմակերպում /1144 ծրագիր 11001 միջոցառման դասիչ/ ծրագրի շրջանակներում 2020 թվականի համար նախատեսված 21652.4 հազ. դրամն ուղղվելու է ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» պետական ոչ առևտրային կազմակերպությունից նշված ծառայությունը ձեռք բերելուն՝ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով:

Կարևոր է նշել, որ յուրաքանչյուր տարի վերանայվում և ընդլայնվում է համապատասխան այն մարմինների և կառույցների ցանկը, որտեղից ընդգրկվում են ունկնդիրները: Այսպես, 2005-2019 թվականների ընթացքում պետական պայմանագրերի շրջանակներում վերապատրաստման (կատարելագործման) ուսուցողական դասընթացներ են անցել ՀՀ դատախազության, ՀՀ քննչական կոմիտեի, ՀՀ ոստիկանության, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային ծառայությունների հետաքննության և նախաքննության իրավասու մարմինների, ՀՀ պաշտպանության նախարարության ռազմական ոստիկանության, զորամիավորումների և զորամասերի, ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչության փորձաքննությունների համար ելակետային տվյալներ ձեռք բերելու պարտականություններ, փորձաքննություններ նշանակելու

լիազորություններ ունեցող ընդհանուր թվով 4391 աշխատակիցներ: Անհրաժեշտ է առանձին նշել, որ 2018-2019 թվականների ընթացքում շարունակվել են հաջողությամբ իրականացվել դեռևս 2009 թվականից սկսած արտագնա վերապատրաստման և կատարելագործման ուսուցողական դասընթացները, ինչպես գորամասերի հրամանատարների և ելակետային տվյալներ ձեռք բերելու պարտականություններ ունեցող այլ պաշտոնատար անձանց (սպայական անձնակազմի) համար Հայաստանի Հանրապետության մարզերում տեղակայված առանձին գորամասերում, այնպես էլ ՀՀ ոստիկանության և ՀՀ ԱԻՆ համակարգի համապատասխան աշխատակիցների համար: Մասնավորապես, ՀՀ պաշտպանության նախարարի հանձնարարության համաձայն 2018 թվականին կազմակերպվել և իրականացվել են 10-օրյա վերապատրաստման և կատարելագործման ուսուցողական դասընթացներ ՀՀ Արարատի մարզի Արարատ քաղաքում տեղակայված 58831 և 76852 գորամասերի, Գեղարքունիքի մարզի Կարճաղբյուր համայնքում տեղակայված ՊՆ 28418 գորամասերի և Ճամբարակ քաղաքում տեղակայված ՊՆ 25836 գորամասի, ԼՂՀ Շահումյանի շրջանի Քարվաճառ քաղաքում տեղակայված ՊՆ 75937 գորամասի ելակետային տվյալներ ձեռք բերելու պարտականություններ ունեցող իրավասու սպաների համար: 2019 թվականի առաջին եռամսյակի ընթացքում ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետի հանձնարարության համաձայն կազմակերպվել և իրականացվել են 10-օրյա վերապատրաստման և կատարելագործման ուսուցողական դասընթացներ Երևան քաղաքում տեղակայված ՊՆ 41783 գորամասի ելակետային տվյալներ ձեռք բերելու պարտականություններ ունեցող իրավասու սպաների համար ևս:

ՀՀ ոստիկանության Շտաբի պետի գրության համաձայն 2018 թվականի ընթացքում նմանատիպ դասընթացներ կազմակերպվել և անցկացվել են Լոռու, Տավուշի և Շիրակի մարզային վարչությունների իրավասու աշխատակիցների համար: 2019 թվականի երկրորդ կիսամյակում նախատեսված է նմանատիպ դասընթացների կազմակերպումն ու իրականացումը ՀՀ ոստիկանության այլ մարզային վարչությունների իրավասու աշխատակիցների համար:

Նշված ժամանակահատվածում՝ 2009-2019 թվականների ընթացքում վերոհիշյալ արտագնա դասընթացներին ընդհանուր առմամբ մասնակցել են թվով 2602 ունկնդիրներ:

Կարևոր է նշել, որ դասընթացների ընթացքում ունկնդիրները ծանոթացել են կազմակերպությունում իրականացվող փորձաքննությունների տեսակների,

փորձագիտական բնագավառի նորագույն տեխնոլոգիաների, վերջիններիս հնարավորությունների և այլ առանձնահատկությունների հետ:

2019թ.-ի համար հաստատված մասնագիտական ուսուցում և որակավորման բարձրացման կազմակերպման գծով 360 հոգու համար նախատեսված 17066.1 հազար դրամից 2019թ-ի 30.04.2019թ-ի դրությամբ կատարվել է 1042,9 հազար դրամի՝ 22 հոգու վերապատրաստում, մնացած 338 ունկնդրի վերապատրաստումը նախատեսվում է իրականացնել մինչև տարեվերջ:

Պետք է նաև արձանագրել, որ կազմակերպության կողմից իրականացվող վերապատրաստման (կատարելագործման) ուսուցողական դասընթացները կրում են շարունակական բնույթ, քանի որ այդ գործընթացը նպաստում է ինչպես հետաքննության և նախաքննության որակի բարելավմանը, այնպես էլ իրավասու մարմինների համապատասխան աշխատակիցների մասնագիտական գիտելիքների կատարելագործմանը:

Անհրաժեշտ է ընդգծել, որ 2018 թվականին նշված դասընթացներին առաջին անգամ ընդգրկվել են ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայության համապատասխան ստորաբաժանումների աշխատողներ, ինչպես նաև տևական ընդմիջումից հետո ՀՀ դատախազության դատախազներ:

Մինևույն ժամանակ պետք է նշել, որ 2018 թվականին և 2019 թվականի տարեսկզբին վերանայվել և «Փորձաքննությունների ազգային բյուրո»-ի գիտական խորհրդի կողմից հաստատվել են բոլոր ծրագրեր-սեղմագրերը, որոնցում ընդգրկված նոր թեմաներով էլ՝ ՀՀ Կառավարության համապատասխան որոշմամբ սահմանված թեմաների քանակներին համապատասխան, իրականացվում են դասընթացները:

Անհրաժեշտ է նշել, որ 2020թ.-ի ընթացքում նախատեսվում է նշված դասընթացներին կրկին ընդգրկել Հայաստանի Հանրապետության ոստիկանության ծառայողներին, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորամիավորումների, զորամասերի իրավասու սպաներին և ռազմական ոստիկանության իրավասու աշխատակիցներին, Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի զորամասերի սպայական անձնակազմին, Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի օպերատիվ հետախուզական և ներքին անվտանգության իրավասու աշխատակիցներին, Հայաստանի Հանրապետության դատախազության, ազգային անվտանգության ծառայության, քննչական կոմիտեի, ինչպես նաև այլ մարմինների իրավասու աշխատողներին:

Կարևոր է նաև նշել, որ 2020թ.-ի ընթացքում դասընթացների առավել արդյունավետ կազմակերպման և անցկացման նպատակով, բացի ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» պետական ոչ առևտրային կազմակերպության համապատասխան բաժինների բարձրակարգ մասնագետներից, գիտնականներից և փորձագետներից, նախատեսվում է ըստ անհրաժեշտության շարունակել ներգրավել նաև Երևանի պետական համալսարանի, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի, Հայաստանի ճարտարագիտական համալսարանի (պոլիտեխնիկի), ՀՀ ոստիկանության ակադեմիայի, Երևանի դատական փորձագիտության և հոգեբանության ինստիտուտի, ՀՀ ԱՆ դեղերի և բժշկական տեխնոլոգիաների գործակալության և այլ կառույցների պրոֆեսորա-դասախոսական կազմի ներկայացուցիչներին:

Նշենք նաև, որ դասընթացները պատշաճ որակով անցկացվում են համապատասխան դիդակտիկ նյութերի (այդ թվում նաև՝ էլեկտրոնային կրիչների վրա տեղադրված), ժամանակակից համակարգչային տեխնիկայի, անհրաժեշտ գույքի, գրականության, ինչպես նաև ուսումնական ձեռնարկների օգտագործմամբ: Ունկնդիրների յուրաքանչյուր խմբի համար կազմվել է դասավանդման հատուկ ծրագիր, ելնելով նրանց մասնագիտական ուղղվածությունից: Մասնավորապես՝ ոստիկանության համակարգի աշխատակիցների համար, բացի դասական քրեագիտական ուղղությունների դասավանդումից, շեշտ է դրվել նաև ավտոտեխնիկական, նյութագիտական (մասնավորապես՝ թմրամիջոցների), դատաբժշկական, տոքսիկոլոգիական, համակարգչատեխնիկական և այլ ուղղությունների վրա, իսկ ՊՆ իրավասու աշխատակիցների համար կազմակերպված դասընթացների շրջանակներում դասավանդման շեշտը դրվել է զինվորական հանցագործությունների, դեպքի վայրի հետազոտության և պահպանման, իրեղեն ապացույցների հայտնաբերման, ֆիքսման, առգրավման և փաթեթավորման առանձնահատկությունների վրա: Նույն մոտեցումներն են կիրառվել այլ իրավասու մարմինների ունկնդիրների համար նախատեսված դասավանդման ծրագրերը կազմելիս:

Կարևոր է նշել, որ դասախոսություններն իրականացվում են համաձայն հաստատված կրթական մոդուլների (ծրագիր-սեղմագրերի), 2019 թվականին գնման տնթացակարգի տեխնիկական բնութագրին համապատասխան: Կազմակերպության ուսումնակրթական բաժնի նախաձեռնությամբ համապատասխան փորձագիտական բաժինների փորձագետների (մասնագետների) ուժերով 2008-2019 թվականների դրությամբ կազմվել և գիտխորհրդի կողմից հաստատվել են ընդհանուր թվով 186 ուսումնական

մողուլներ (ծրագիր-սեղմագրեր), այդ թվում նաև՝ այնպիսի նորագույն փորձագիտական ուղղություններով, ինչպիսիք են, օրինակ՝ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ում իրականացվող փորձաքննությունների տեսակները և դրանց շրջանակներում լուծվող խնդիրները, ելակետային տվյալների դերը փորձաքննության նշանակման և կատարման ընթացքում, կրիմինալոգիայի արդի հիմնախնդիրները, հրազենային վնասվածքների ծագման մեխանիզմը, հատկանիշները և դրանց հետազոտության մեթոդները, քրեագիտական պրակտիկայում կիրառվող անձի նույնականացման ժամանակակից մեթոդների գիտական հիմքերը, դատահոգեբանական փորձաքննությունների առանձնահատկությունները և իրավական նշանակությունը, տոքսիկաքիմիական փորձաքննության առանձնահատկությունները կենսամիջավայրերում /մեզ, մազ, արյուն/, թմրամիջոցների հայտնաբերման ժամանակակից եղանակները, կենդանական ծագման սննդամթերքների նմուշառումը որպես փորձաքննության իրականացման համար ելակետային տվյալների ձեռք բերում, այդ գործընթացի հիմնադրույթները և դրանց համապատասխանությունը ՀՀ-ում և ԵԱՏՄ տարածքում գործող նոր տեխնիկական կանոնակարգերի պահանջներին, ՀՀ բյուջեից, կամ դրան հավասարեցված միջոցներով իրականացված շինարարական աշխատանքների գծով նախապատրաստվող կամ արդեն իսկ հարուցված քրեական գործերով շինարարատեխնիկական հետազոտությունների կատարման առանձնահատկությունները, փորձաքննությանն առաջադրվող հարցերը և դրանց պարզաբանման համար անհրաժեշտ նյութերի նախապատրաստումն ու փորձաքննության տրամադրումը, դեպքի վայրի զննությունն կատարելիս դիակի նկարագրության կարգը և առանձնահատկությունները, մահվան վաղեմության որոշման և դիակի դիրքի փոփոխված լինելու մասին վկայող հատկանիշները, մեխանիկական վնասվածքներ, դրանց դասակարգումը, վնասվածքների առանձին տեսակների հատկանիշները, դատաբժշկական նշանակությունը, ժամանակակից մոլեկուլյար գենետիկայի մեթոդների կիրառումը դատագենետիկական փորձաքննություններում, Սերվիտուտի հասկացությունը և օրենսդրական դաշտի կարգավորման ընդհանուր դրույթները ՀՀ-ում և մի շարք երկրներում, Ապրանքային տեղեկատվության միջոցները, դատահոդագիտական փորձաքննությանների առանձնահատկությունները, բույսերի՝ մասնավորապես թմրանյութ պարունակող բույսերի փորձաքննությունների առանձնահատկությունները, Փականների և դրանց մեխանիզմների փորձագիտական հետազոտության առանձնահատկությունները, դատաձեռագրաբանական փորձաքննության

հասկացությունը, առանձնահատկությունները և դրանց ապացուցողական նշանակությունը քրեական և քաղաքացիական գործեր քննելիս, դատա-հեղինակաբանական փորձաքննության հասկացությունը և առանձնահատկությունները, դատական փորձաքննության տեսություն, ակտուալ հիմնախնդիրներ և այլն:

Վերը թվարկված մոդուլների վերանայման, համալրման, լրամշակման և միջազգային չափանիշներին համապատասխանեցման աշխատանքները շարունակվելու են նաև 2020թ.-ի ընթացքում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Փորձաքննությունների ազգային բյուրոն տեղադրված պետական պատվերի շրջանակներում իրականացնում է թվով 29 տեսակներով փորձաքննություններ, նախատեսվում է յուրաքանչյուր տարի գիտխորհրդի հաստատմանը ներկայացնել մինչև 15 նոր ուսումնական մոդուլներ՝ ապրանքագիտական, համակարգչային, տոքսիկոլոգիական, նյութագիտական, տնտեսագիտական, բժշկական, պայթյունատեխնիկական և այլ փորձագիտական ուղղություններով:

Գոյություն ունեցող ծախսային ծրագրերը (պարտավորությունները).

Հաշվի առնելով նշված գործընթացի շարունակական բնույթը, ինչպես նաև ելնելով այն նկատառումներից, որ սույն ծրագրի շրջանակներում մեր կողմից չի կանխատեսվում ունկնդիրների ընդհանուր քանակության աճ, 2019 թվականի համար նախատեսված 360 ունկնդիրների թվաքանակը 2020թ.-ի ընթացքում ըստ մեր կանխատեսումների, կմնա անփոփոխ, սակայն հիմք ընդունելով Լրացուցիչ կրթության ուսուցման գծով նախորդ տարիների ընթացքում իրականացված ծառայությունների վրա կատարված ծախսերը, ինչպես նաև հաշվի առնելով վերջին տարիների գնաճը (տնտեսական ծախսերի, կոմունալ վճարումների, գործուղման ծախսերի հետ կապված ուղևորափոխադրումների սակագների ու արտագնա, մասնավորապես ըստ պահանջի նաև Արցախի Հանրապետություն, ուսուցման կազմակերպման նպատակով գործուղումների քանակի ավելացմամբ և այլն):

Ունենալով նպատակ 2020թ.-ի ընթացքում շարունակել վերը նշված լրացուցիչ կրթության շրջանակներում իրականացվող ուսուցման գործընթացը՝ ապահովել բարձրորակ մասնագիտական ներուժով, նաև պահպանելով և զարգացնելով վերջինիս նյութական բազան, այդ թվում համալրելով նորագույն դիդակտիկ նյութերով, տեխնիկական սարքավորումներով և համակարգչային ծրագրերով, 2020թ.-ի համար

կպահանջվի հետևյալ ֆինանսական միջոցները ըստ տնտեսագիտական դասակարգման հոդվածների.

- **«Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարներ»** տնտեսագիտական դասակարգման հոդվածի ձևավորման համար նախատեսվում է օգտագործել 2020թ.-ին՝ 12865.0 հազ.դրամ (առանց հաշվի առնելու առաջիկա տարիներին Հայաստանի Հանրապետությունում նվազագույն աշխատավարձի փոփոխությունները): Վերջինս հաշվարկելիս հաշվի է առնվել դասախոսության 9600.0 հազ.դրամ արժեքը (1 ժամվա նախատեսվող արժեքը 3000 դրամ x ընդհանուր առավելագույն ժամաքանակ՝ 3200 ժամ) և 3265.0 հազ.դրամ (ամսական միջին աշխատավարձ՝ 136.0 հազ.դրամ x 2 աշխատակից x 12 ամիս) ուսումնաօժանդակ անձնակազմի աշխատավարձի ֆոնդը: Հարկ է նշել, որ նախատեսվող 12865.0 հազար դրամ գումարից պետական բյուջե վճարվելու է շուրջ 4116.8 հազար դրամի չափով եկամտային հարկ, սոցիալական և դրոշմանիշային վճարներ:

- **«Նյութեր», այդ թվում «Գրասենյակային նյութեր» և «Այլ նյութեր»** տնտեսագիտական դասակարգման հոդվածներով Ուսուցման համար անհրաժեշտ դիդակտիկ նյութերի, գրասենյակային ապրանքների, ուսումնական պրոցեսի հետ կապված ծառայությունների, ինչպես նաև կոմունալ ծախսերի, այդ թվում **«Էլեկտրաէներգիայի դիմաց վճարումներ», «Գազի դիմաց վճարումներ», «Այլ կոմունալ ծառայությունների դիմաց վճարումներ» և «Կապի ծառայությունների դիմաց վճարումներ»** տնտեսագիտական դասակարգման հոդվածներով ծառայությունների ձեռք բերման ծախսերը կկազմեն 2020 թվականին՝ շուրջ 2966.8 հազ.դրամ (հաշվի առնելով վերջին տարիներին տեղի ունեցած էլեկտրաէներգիայի և գազի սակագների բարձրացումները, ինչպես նաև գնաճը):

- **«Ներքին և արտասահմանյան գործուղումներ»** տնտեսագիտական դասակարգման հոդվածով արտագնա դասընթացները կազմակերպելու նպատակով, նախատեսվում է 2020 թվականին՝ շուրջ 1000.0 հազ.դրամ: Վերջինս հաշվարկվել է կանխատեսվող ուղղություններով արտագնա դասընթացների վայրեր գործուղելու հետ կապված ՀՀ Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ին ընդունված թիվ 2335-Ն որոշմամբ սահմանված գործուղվող աշխատողների ճանապարհածախսի, օրապահիկի և գիշերավարձի նվազագույն չափերով: Ինչպես նշվեց արտագնա դասընթացները նախատեսվում է կազմակերպել ՀՀ ոստիկանության համապատասխան տարածքային ստորաբաժանումներում, ինչպես նաև ՀՀ ՊՆ զորամիավորումներում, զորամասերում և զինվորական հիմնարկներում, ըստ անհրաժեշտության նաև միաժամանակ երկու-երեք ուղղություններով՝ համապատասխան ղեկավարների առաջարկություններից ելնելով:

- «Այլ ծախսեր» տնտեսագիտական դասակարգման հոդվածով, սույն ծրագրի պատշաճ իրականացումը ապահովելու նպատակով սպասարկման ծառայությունների՝ մասնավորապես փոստային ծառայության, բանկային ծառայության և այլ ծառայությունների ձեռքբերման նպատակով 2020թ.-ին նախատեսվում է 492.1 հազար դրամ:

- «Կապիտալ ակտիվների ձեռքբերում» տնտեսագիտական դասակարգման հոդվածով ոչ նյութական ակտիվների՝ մասնավորապես մասնագիտական գրականության և ծրագրերի, տեխնոլոգիական փաստաթղթերի և այլն ձեռքբերման նպատակով նախատեսվում է 2020թվականին շուրջ 719.8 հազ.դրամ:

- «Հարկեր, տուրքեր և այլ պարտադիր վճարներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածով նախատեսվում է 2020 թվականին՝ շուրջ 3608.7 հազ.դրամ:

Անհրաժեշտ է նշել, որ տարեցտարի ավելանում են հանցագործությունների կատարման մեխանիզմներն ու հնարավորությունները, որի պարագայում նպատակահարմար է դասընթացների ամբողջական կազմակերպման համար ուսումնական պլանների մեջ ընդգրկել այդ առումով նոր թեմաներ՝ լրացուցիչ դասաժամերով (մասնավորապես տնտեսական հանցագործությունների կատարման ժամանակ որպես գործիք օգտագործվում է փաստաթղթերի կեղծումը, շահումով խաղային ավտոմատների, հսկիչ դրամարկղային մեքենաների և այլնի ֆիսկալային հիշողությունների ոչնչացումը և այլն):

Վերոնշյալ հաշվարկներից հետևում է, որ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 1144 ծրագրի 11001 միջոցառման դասիչով նախատեսված «Մասնագիտական ուսուցում և որակավորման բարձրացման կազմակերպում» ֆինանսավորվող ծրագրի շրջանակներում պետական բյուջեից նվազագույնը ակնկալվում է ֆինանսավորում 2020 թվականի համար՝ 21652.4 հազար դրամի չափով:

Գոյություն ունեցող միջնաժամկետ ծախսային ծրագրերը (պարտավորությունները) 2020-2022թթ.-երի համար.

Հաշվի առնելով նշված գործընթացի շարունակական բնույթը, ինչպես նաև ելնելով այն նկատառումներից, որ սույն ծրագրի շրջանակներում մեր կողմից չի կանխատեսվում ունկնդիրների ընդհանուր քանակության տարեկան աճ, 2019 թվականի համար նախատեսված 360 ունկնդիրների թվաքանակը 2020-2022թթ.-ի ընթացքում ըստ մեր կանխատեսումների, կմնա անփոփոխ:

Ունենալով նպատակ 2020-2022թթ.-ի ընթացքում շարունակել վերը նշված լրացուցիչ կրթության շրջանակներում իրականացվող ուսուցման գործընթացը՝ ապահովել

բարձրորակ մասնագիտական ներուժով, նաև պահպանելով և զարգացնելով վերջինիս նյութական բազան, այդ թվում համալրելով նորագույն դիդակտիկ նյութերով, տեխնիկական սարքավորումներով և համակարգչային ծրագրերով, 2020-2022թթ.-ի համար կպահանջվի հետևյալ ֆինանսական միջոցներն ըստ տնտեսագիտական դասակարգման հոդվածների.

«Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածի կկազմեն համապատասխանաբար 2020թ.-ին՝ 12865.0 հազ.դրամ, 2021թ.-ին՝ 12865.0 հազ.դրամ, 2022թ.-ին՝ 12865.0 հազ.դրամ (հարկ է նշել, որ յուրաքանչյուր տարի նախատեսվող 12865.0 հազար դրամ գումարից պետական բյուջե վճարվելու է շուրջ 4116.8 հազար դրամի չափով եկամտային հարկ, սոցիալական և դրոշմանիշային վճարներ):

- **«Նյութեր»**, այդ թվում **«Գրասենյակային նյութեր»** և **«Այլ նյութեր»** տնտեսագիտական դասակարգման հոդվածներով Ուսուցման համար անհրաժեշտ դիդակտիկ նյութերի, գրասենյակային ապրանքների, ուսումնական պրոցեսի հետ կապված ծառայությունների, ինչպես նաև կոմունալ ծախսերի, այդ թվում **«Էլեկտրաէներգիայի դիմաց վճարումներ»**, **«Գազի դիմաց վճարումներ»**, **«Այլ կոմունալ ծառայությունների դիմաց վճարումներ»** և **«Կապի ծառայությունների դիմաց վճարումներ»** տնտեսագիտական դասակարգման հոդվածներով ծառայությունների ձեռք բերման ծախսերը կկազմեն համապատասխանաբար 2020 թվականին՝ շուրջ 2966.8 հազ.դրամ, 2021 թվականին՝ շուրջ 2981.8 հազ.դրամ, 2022 թվականին՝ շուրջ 2981.8 հազ.դրամ:

- **«Ներքին և արտասահմանյան գործուղումներ»** տնտեսագիտական դասակարգման հոդվածով արտագնա դասընթացները կազմակերպելու նպատակով, նախատեսվում է համապատասխանաբար 2020 թվականին՝ շուրջ 1000.0 հազ.դրամ, 2021 թվականին՝ շուրջ 1000.0 հազ.դրամ, 2022 թվականին՝ շուրջ 1000.0 հազ.դրամ: Վերջինս հաշվարկվել է կանխատեսվող ուղղություններով արտագնա դասընթացների վայրեր գործուղելու հետ կապված ՀՀ Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ին ընդունված թիվ 2335-Ն որոշմամբ սահմանված գործուղվող աշխատողների ճանապարհաճախսի, օրապահիկի և գիշերավարձի նվազագույն չափերով: Ինչպես նշվեց արտագնա դասընթացները նախատեսվում է կազմակերպել ՀՀ ոստիկանության համապատասխան տարածքային ստորաբաժանումներում, ինչպես նաև ՀՀ ՊՆ զորամիավորումներում, զորամասերում և զինվորական հիմնարկներում, ըստ անհրաժեշտության նաև միաժամանակ երկու-երեք ուղղություններով՝ համապատասխան ղեկավարների առաջարկություններից ելնելով:

- «Այլ ծախսեր» տնտեսագիտական դասակարգման հոդվածով, սույն ծրագրի պատշաճ իրականացումը ապահովելու նպատակով սպասարկման ծառայությունների՝ մասնավորապես փոստային ծառայության, բանկային ծառայության և այլ ծառայությունների ձեռքբերման նպատակով համապատասխանաբար՝ 2020թ.-ին նախատեսվում է 492.1 հազար դրամ, 2021թ.-ին՝ 495.2 հազար դրամ, 2022թ.-ին՝ 502.5 հազար դրամ:

- «Կապիտալ ակտիվների ձեռքբերում» տնտեսագիտական դասակարգման հոդվածով ոչ նյութական ակտիվների՝ մասնավորապես մասնագիտական գրականության և ծրագրերի, տեխնոլոգիական փաստաթղթերի և այլն ձեռքբերման նպատակով նախատեսվում է համապատասխանաբար 2020թ.-ին շուրջ 719.8 հազ.դրամ, 2021թ.-ին շուրջ 701.7 հազ.դրամ, 2022թ.-ին շուրջ 694.4 հազ.դրամ:

- «Հարկեր, տուրքեր և այլ պարտադիր վճարներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածով նախատեսվում է համապատասխանաբար 2020 թ-ին՝ շուրջ 3608.7 հազ.դրամ, 2021թ-ին՝ շուրջ 3608.7 հազ.դրամ, 2022 թ-ին՝ շուրջ 3608.7 հազ.դրամ:

Անհրաժեշտ է նշել, որ տարեցտարի ավելանում են հանցագործությունների կատարման մեխանիզմներն ու հնարավորությունները, որի պարագայում նպատակահարմար է դասընթացների ամբողջական կազմակերպման համար ուսումնական պլանների մեջ ընդգրկել այդ առումով նոր թեմաներ՝ լրացուցիչ դասաժամերով (մասնավորապես տնտեսական հանցագործությունների կատարման ժամանակ որպես գործիք օգտագործվում է փաստաթղթերի կեղծումը, շահումով խաղային ավտոմատների, հսկիչ դրամարկղային մեքենաների և այլնի ֆիսկալային հիշողությունների ոչնչացումը և այլն):

Վերոնշյալ հաշվարկներից հետևում է, որ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 1144 ծրագրի 11001 միջոցառման դասիչով նախատեսված «Մասնագիտական ուսուցում և որակավորման բարձրացման կազմակերպում» ֆինանսավորվող ծրագրի շրջանակներում պետական բյուջեից նվազագույնը ակնկալվում է ֆինանսավորում 2020-2022 թվականների յուրաքանչյուր տարվա համար՝ 21652.4 հազար դրամի չափով:

Աղյուսակ N 1. Ոլորտի (համակարգի) ծրագրերի գծով 2020-2022թթ ծախսերի կանխատեսում

Ծրագրի դասիչը	Միջոցառման դասիչը	Ծրագրի անվանում	2019թ. հաստատված բյուջե	Կանխատեսում		
				2020թ.	2021թ.	2022թ.
				Ա	1	2
1144	11001	«Մասնագիտական ուսուցման և որակավորման բարձրացման կազմակերպում», այդ թվում	17066.1	21652.4	21652.4	21652.4
		Ընթացիկ ծախսեր	16257.7	20932.6	20950.7	20958
		Կապիտալ ծախսեր	808.4	719.8	701.7	694.4
Ընդամենը պարտավորություններ, որից			17066.1	21652.4	21652.4	21652.4
Ընթացիկ ծախսեր			16257.7	20932.6	20950.7	20958
Ընթացիկ կապիտալ ծախսեր			808.4	719.8	701.7	694.4

Տնօրեն՝

Ա. Հովսեփյան

Գլխ. հաշվապահ՝

Ա. Մարգարյան

Ծրագրի հիմանվորումում նշված տեղեկատվության նախապատրաստման համար պատասխանատու համակարգող՝ ֆինանսատնտեսագիտական տեղեկատվության պատասխանատու, տնօրենի տեղակալ Խ.Աբաջյան, տնօրենի տեղակալներ՝ Ա.Գահնապետյան, Պ.Ոսկանյան, ֆինանսատնտեսագիտական բաժնի տնտեսագետ Ա.Գրիգորյան, փորձագետների ուսուցման և որակավորման կենտրոնի պետ Վ.Պապիկյան: